

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ին, կիրակի.—Կարմիր կիրակի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, որը «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14):

*
* *

Մայիսի 8-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է այցելում հյուրաբար Սովետական Հայաստանում գտնվող Սովետական Միությունում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Հերբերտ Բեն Քերտիս Բիքլը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Մեծարգո դեսպանին ու նրա տիկնոջը Վեհարանում, հանուն Վեհափառ Հայրապետի, ընդունում է Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, նրանց ծանոթացնում Մայր Աթոռում կատարվող աշխատանքներին և Մայրավանքի շրջափակին:

*
* *

Մայիսի 10-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է այցելում Մոսկվայում իսպաներեն լեզվով լույս տեսնող «ELPAIS» (ԷԼՓԱԻՍ) թերթի թղթակից Իզմայել Լոփեզ Մունոզը, որը հարցազրույց է ունենում Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի հետ՝ «Հայ եկեղեցու ներկա վիճակը թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում» թեմայի շուրջ:

*
* *

Մայիսի 13-ին, կիրակի.—Ե կիրակի: Տօն Երևման ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Սա է զէն յաղթութեան և զօրութիւն հաւատացելոց, որ ի յերկինս երևեալ» (շարական) բնաբանով:

*
* *

Մայիսի 17-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբանները մեկօրյա շրջայցուլ-

տի են մեկնում Բյուրական՝ հայրապետական ամառանոց:

*
* *

Մայիսի 20-ին, կիրակի.—Զ կիրակի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ ինձ, թէպէտ եւ մեռանի, կեցցէ» (Յովհ. ԺԱ 25) բնաբանով:

*
* *

Մայիսի 24-ին, հինգշաբթի.—Խ օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և հավարտ ս. պատարագի քարոզում «Եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա: Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս: Եւ նոցա երկիր պագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ» (Ղուկ. ԻԴ 50—52) բնաբանով:

Վերջում կատարվում է մաղթանք՝ Հայոց Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրության տոնի առթիվ:

*
* *

Մայիսի 27-ին, կիրակի.—Է կիրակի: Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ճանաչել զիմաստութիւն եւ զընխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակք Ա 2) բնաբանով:

*
* *

Մայիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են 1978-79 ուս. տարվա ամավերջի քննությունները, որոնք շարունակվելու են մինչև հունիսի 8-ը: